խաւ: Կռողները թողեցին մենամարտութիւնը, վազեցին իրանց երկպառակութեան առարկայի ետեւից:

Միթէ՞ միեւնոյնը չպատահեց իմ եւ Սագօյի մէջ: Չէ՛, մտածում էի ես, նրա փոքրիկ գլուխը կը ջարդեմ, եթէ միւս անգամ նա կը համարձակի Մարօի անունը յիշել. ես աւելի թոյլ չպէտք է լինեմ, քան այն ճնճղուկը, որ իր կեանքով պաշտպանում էր սիրոյ գաղափարը:

Նոյն րոպէին, կարծես, ես լսում էի մի հեկեկանք, կարծես, մի դառն լացելու ձայն զարկում էր իմ ականջներին: Ինձ թւում էր, թէ ես դպրոցումն էի, տէր Թոդիկը չոքեցրել էր ինձ մանրած աղիւսի կտորտանքի վրայ. ես տեսնում էի Սօնային (դասատան պատուհանից երեւում էր նա) միեւնոյն ծառի ստորի ներքոյ, ուր միշտ նստում էր, եւ այժմ նստած էր: Նա գլուխը քարշ էր գցել իր ծնկների վրայ եւ ձեռքով բռնել էր իր աչքերը. լաց էր լինում, եւ ես լսում էի նրա ցաւալի հեկեկանքը:Ինչո՞ւ էր լաց լինում նա, ո՞ւմ համար էր լաց լինում, ինչո՞ւ միշտ լաց էր լինում նա այն ժամանակ, երբ նրա հայրն ինձ ծեծում էր կամ գետնի վրայ չոքեցնում էր, իսկ միւս ժամանակներում միշտ ուրախ էր: Խե՜ղճ աղջիկ, որքա՜ն լաց կը լինես դու, եթէ հիմա՛, հիմա՛ տեսնես ինձ...

Այս կիսաքուն, կիսաարթուն երազների մէջ էի ես, յանկարծ լսելի եղաւ մի սաստիկ դղրդոց. որպէս թէ մի ծանր բան վայր ընկաւ գետին: Աչքս բաց արի, տեսնեմ՝ իմ մահճի մօտ կանգնած էր վիթխարի Մըհէն եւ ինքն իրան մրթմրթում էր.

— Հազար անգամ ասել եմ, էսպիսի յիմար բաներ մի տոէք իմ ձեռքը. ինքը սատանան կը մոլորի, էնքան թեթեւ է, հէնց շունչ ես քաշում, թռչում է ձեռքիցդ:

Վայր ընկած բանը փոքրիկ փայտեայ մատուցարանն էր, որի վրայ Մըհեն ինձ համար նախաճաշիկ էր բերում, նրա կարծիքով, իւր կոպիտ ձեռքերի համար անպատճառ մէկ ծանր բան պէտք է լինէր, որ կարողանար տանել: Նա թողեց թափոած ամաններն առանց հաւաքելու եւ ուզում էր դուրս գնալ, երբ Մարօն ներս մտաւ:

— Ու՜ֆ, քոռանամ ես, այդ ի՞նչ արեցիր, սարսաղ, — դարձաւ նա դէպի ապշած սպասաւորը եւ սկսեց հաւաքել թափոած ամանները: — Երբ՞ պէտք է դու մի բան սովորես:

— Ես ոչ մի ժամանակ չեմ սորվի այսպիսի սատանայական բաները, թո՛ղ կնիկներն անեն, — պատասխանեց նա կոշտ կերպով. — Դի՛ր իմ շալակին մէկ եզան բեռը ցորեն, ասա՛, Մըհէ, տար ջաղացը, կը տանեմ, մի հատ էլ